



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

30 ՕԳՈՍՏՈՍԻ
2022 թ.
№ 11 (1090)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաբեր • Իրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐԿԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԻՐ

Գիտելիքի և դպրության օրվա խորհուրդը

Տարիներ շարունակ Գիտելիքի և դպրության օրը Հայաստանում յուրահատուկ խորհուրդ է ընկալում է ունեցել: Գաղտնիք չէ, որ կրթության հանդեպ մեր ազգային մոտեցումը մեր գեներտիկական հիշողության արտահայտությունն է, տարբեր մարտահրավերների դեմ մեր հաղթաբուրդը:


Ցավոք, վերջին տարիներին, տարբեր իրողություններով պայմանավորված, փոխվել է ուսուցչի և կրթության հանդեպ հասարակության վերաբերմունքը: Գիտելիքի և դպրության օրը, այդ իմաստով, պետք է նոր սկիզբ դառնա՝ նորովի արժևորվի մեր կրթական արժեհամակարգի անցյալն ու ներկան:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն արդեն քանի՜ սերունդ է ընդունում և ճանապարհում դեպի կյանք՝ կազմակերպելով ուսանողների մասնագիտական կրթությունն ու սերմանում սեր մանկավարժի առաքելության հանդեպ: Եվ մանկավարժական կադրերի պատրաստման երթն անխափան է, քանի դեռ կան ուսուցանող նվիրյալ դասախոսներ ու գիտնականներ:

Կրթությունն է, որ հզորություն է ուժ է տալիս անկախ պետականության առաջընթացին, օգնում դիմակայել մարտահրավերներին: Գիտելիքով զինված՝ մենք ամխոցելի ու անպարտ ենք. սա պետք է հասկանա յուրաքանչյուր հայ, և հենց գիտելիքն է մեզ իրավունք տալիս հաստատելու մեր տեղը արևի տակ: Միայն կրթության հանդեպ մեր ջանադիր վարքով կարող ենք ընդդիմանալ 21-րդ դարի մարտահրավերներին՝ պահպանելով մեր ազգային ինքնությունն ու արժանապատվությունը:

Շնորհավորում ենք կրթության ոլորտի բոլոր նվիրյալներին՝ դասախոսներին ու մանկավարժներին, որոնք ընտրել են աշխարհի ամենալավ մասնագիտությունը, և որոնց առաքելությունը ամենակարևորն է:

Շնորհավոր Սեպտեմբերի 1՝ Գիտելիքի և դպրության օր:



ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության միջավայրի զարգացման և «ՀայՓոստ»-ի հետ համատեղ շրջանառության մեջ դրված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակ» նամականիշ՝ նվիրված բուհի հոբելյանին:

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

1922 թվականի նոյեմբերի 7-ին Երևանի պետական համալսարանի Մանկավարժության ֆակուլտետի հիմնադրվելու 100-ամյակի առթիվ Սկզբնական կրթության ֆակուլտետը դարձավ Հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադիր ֆակուլտետներից: Նորաստեղծ ինստիտուտը սկզբում ուներ միայն մանկավարժական ֆակուլտետ՝ նախադպրոցական, դպրոցական և արտադպրոցական մասնագիտություններով:

Ֆակուլտետի կազմում գործում են 3՝ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների, Աշոտ

Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի, Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոններ:

Սկզբնական կրթության ֆակուլտետն այսօր հանրապետությունում նախադպրոցական կրթական հաստատությունների մասնագետներ և տարրական դասարանների ուսուցիչներ պատրաստող դարձնում է:

Սկզբնական կրթության ֆակուլտետը բազմազոր-ծառայության, ուսումնագիտական, հետազոտական կառույց է, որի շրջանավարտները ոչ միայն վաստակաշատ ուսուցիչներ են, այլև կրթության կազմակեր-

պիչներ, պետական-քաղաքական գործիչներ:

Ֆակուլտետն առկա և հեռակա կրթական համակարգերում պատրաստում է բակալավրներ և մագիստրանտներ, ինչպես նաև կրթություն իրականացնում ասպիրանտուրայում:

Ուսանողների թվով ֆակուլտետն այսօր համալսարանի խոշորագույն ստորաբաժանումներից է: Բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում սովորում է շուրջ 1000 ուսանող: Ֆակուլտետի տարբեր ստորաբաժանումներում աշխատում է շուրջ 50 մասնագետ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ, գիտությունների թեկնածուներ և դոցենտներ, ինչպես նաև ասիստենտներ և դասախոսներ:

Ֆակուլտետում աշխատում են ինչպես երկարամյա փորձ և բարձր համարում ունեցող մասնագետներ, այնպես էլ երիտասարդ դասախոսներ, ովքեր զբաղվում են գիտամանկավարժական գործունեությամբ:

Սկզբնական կրթության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը սերտորեն համագործակցում է ոչ միայն ՀՀ հանրակրթական դպրոցների և նախադպրոցական հաստատությունների, կրթության ոլորտի տարբեր ստորաբաժանումների, այլև Ափյուռքի հայկական համայնքների կրթական կառույցների հետ:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից շատերը դասախոսություններով հանդես են գալիս Սիրիայում, Պարսկաստանում, Լիբանանում, Քուվեյթում, Միացյալ Արաբական Էմիրություններում, ԱՊՀ երկրներում և այլն: Ֆակուլտետը համագործակցում է նաև արտասահմանյան մի շարք հեղինակավոր բուհերի հետ:

Ֆակուլտետի կազմում գործում է ՀԳՄՀ Մուլտիմեդիա լաբորատորիան:

Ֆակուլտետի բազմաթիվ դասախոսներ ընդգրկված են ինչպես հանրակրթական դպրոցների, այնպես էլ բուհական ծրագրերի և դասագրքերի հեղինակային խմբերում, միջազգային կրթական ծրագրերում, հանդես են գալիս հանրապետական և միջազգային գիտաժողովներում:





-Տիկին Խաչատրյան, տարիներ շարունակ Սկզբնական կրթության ֆակուլտետի ընդունելության քննություններն ընթացել են մրցույթով՝ ի տարբերություն այլ ֆակուլտետների. ինչո՞վ է պայմանավորված Ձեր դեկավարած ֆակուլտետում դիմորդների բարձր թիվը՝ մասնագիտությունների առավել գրավչությամբ, թե՞ այլ հանգամանքներով... Թերևս շատերը մտածում են, թե տարրական դասա-

մարտություն: Թվային տեխնոլոգիաները ճիշտ, գրագետ ու հմուտ կիրառելու դեպքում հրաշալի գործընկերներ են դառնում: Դիմակայելու համար այս մարտահրավերին՝ հարկ է, որ մեր մանկավարժները, ապագա ուսուցիչները լինեն մեղիագրագետ և կարողանան այդ միջոցները կիրառել որպես կրթական գործիք երեխաների կրթության և դաստիարակության գործում: Սկզբնական կրթության ֆակուլտետն այդ մարտահրավերն ըն-

յին խմբեր են աշխատում, հաջողությամբ համագործակցում են մանկավարժն ու հոգեբանը, գործող ուսուցիչն ու մեթոդիստը, նկարիչն ու մեղիա փորձագետը...

- **Ֆակուլտետի շրջանավարտների հետ հետադարձ կապն ինչպե՞ս եք իրականացնում՝ համատեղ միջոցառումների, տարբեր հանդիպումների և ուրիշ ի՞նչ ձևաչափերով...**

«Ամենաերկար ճանապարհը սկսվում է առաջին քայլից», -

ասում է Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Յեղիմե Խաչատրյանը

րանների երեխաներին ուսուցանելն ավելի հեշտ է, քան բարձր դասարաններում:

- Եթե մասնագիտական գրավչություն ասելով նկատի ունենանք մի կողմից՝ անսահման պատասխանատվությունն ու բազմակողմանի պատրաստվածության անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ մանկական աշխարհի պարզությունը, մաքրությունը ու անմիջականությունը, ապա՝ այո:

Ինչ վերաբերում է հեշտությանը, ապա՝ շատ արհեստավարժ պետք է լինել, մասնագիտական առումով՝ կարողունակ, որպեսզի բարդ գաղափարները, մեզ համար արդեն հայտնի ճշմարտությունները պարզ ու մատչելի եղանակով երեխաներին ներկայացնեն: Ո՞վ չգիտի, թե որքան է 2+2, թվում է շատ պարզ ու հեշտ բան է, սակայն փորձիր դա բացատրել երեխաներին այնպես, որ ոչ թե անգիր անեն, այլ՝ հասկանան ...

- **Խնդրում են ամփոփ ներկայացրեք ֆակուլտետի առանձնահատկություններն ու մատնանշեք այն ձեռքբերումները, որոնք կուզեիք առանձնացնել:**

- Առանձնահատկությունն ամփոփված է հենց ֆակուլտետի անվանման մեջ՝ սկզբնական կրթություն, որտեղ դրվում են մարդու ձևավորման հիմքերը, որտեղ մանրամասնորեն նախագծվում և մեծ ճշգրտությամբ մոդելավորվում է ապագայի մարդը, նրա արժեքներն ու գաղափարները: Հաճախ ենք ականատես լինում, երբ ամենատարբեր ոլորտների շատ ու շատ մասնագետներ, մտածողներ, քաղաքական գործիչներ, շարքային քաղաքացիներ ամենատարբեր խնդիրների առնչությամբ միաբերան մույն բանն են ասում՝ կրթությունն է բոլոր խնդիրների լուծման բանալին և այն պետք է սկսել դեռևս նախադպրոցական տարիքից, տարրական դասարաններից: Ահա հենց այս պատասխանատվությունն ու հասարակական ակնկալիքն էլ բնորոշում է Սկզբնական կրթության ֆակուլտետին, սա է նրա գլխավոր առանձնահատկություններից մեկը:

Ձեռքբերումների մասին շատ կարելի է խոսել, սակայն, կարծում են, դրա լավագույն ապացույցը աշխատաշուկայում մեր շրջանավարտների պահանջված լինելն է ինչպես նախադպրոցական, այնպես էլ տարրական կրթության ոլորտներում: Սա ֆակուլտետի՝ երկար տարիներ իրականացվող աշխատանքի ուղիղ գնահատականն է:

Որպես մնայուն արժեք կցանկանայի մշել ֆակուլտետում արդեն երկար տարիներ աշխատող ակադեմիական համայնքը՝ իր համագործակցային, դրական աշխատանքային մշակույթով: Աֆրիկյան ժողովուրդների մոտ ընդունված մի խմաստություն կա՝ եթե ուզում ես արագ գնալ, քայլի մենակ, եթե ուզում ես հեռուն գնալ, քայլի միասին:

- **Որո՞նք են նախադպրոցական և տարրական օղակների մերօրյա խնդիրները, ֆակուլտետն ի՞նչ նախաձեռնություններ է հանդես բերում դրանց լուծման ուղղությամբ:**

- Ինչպես նախադպրոցական, այնպես էլ տարրական կրթության ոլորտում, որպես հիմնախնդիր, այսօր կառանձնացնելի մեղիակրթությունը: 21-րդ դարն ապագայի մարդուն ենք ձևավորում, հետևաբար պարտավոր ենք հաշվի նստել ժամանակի զարգացումների ու միտումների հետ: Այսօր մենք շատ հզոր ու «հարուստ մրցակից» ունենք՝ համակարգիչը, համացանցը, ինտերնետային ծրագրերն ու հավելվածները: Այսօր աշխարհում հիմնական խնդիրը երեխայի, ընդհանրապես մարդու, ուշադրությունը գրավելու խնդիրն է, և գաղտնիք չէ, որ խելացի սարքերը դա շատ լավ են անում: Սա մարտահրավեր է, բայց չպետք է այն ընկալել որպես հակա-



դունել է դեռևս 2012 թվականից, և այսօր կարող ենք փաստել, որ ունենք որոշակի փորձառություն, ձևավորված մեղիա մշակույթ, կրթական և տեխնիկական ռեսուրսներ՝ վերապատրաստված դասախոսներ, ուսումնական պլաններում ամրագրված դասընթացներ, մուլտիմեդիա լաբորատորիա և լսարաններ, կրթական հարթակ՝ էլեկտրոնային ուսումնական ռեսուրսներով և գրականությամբ:

- **Ի՞նչ կասեիք տարրական դասարանների դասագրքերի մասին:**

- Քանի որ արդեն երկար տարիներ ինքս տարրական դասարանների «Մայրեմի 2, 3, 4», «Հասարակագիտություն 10» դասագրքերի հեղինակային խմբի անդամ եմ, դպրոցական տարբեր ձեռնարկների հեղինակ, այսօր էլ իմ գործընկերների հետ աշխատում եմ նոր սերնդի՝ այսպես անվանեն «ինտերակտիվ» դասագրքերի ստեղծման ուղղությամբ, ինձ թույլ տան զերծ մնալ գնահատումներից:

Սկզբնական կրթության ֆակուլտետում դասագրքատեղծ դասախոսների մի ամբողջ աստղաբույլ է աշխատում՝ արհեստավարժ ու ստեղծագործ: Նրանց անունները մտել են ֆակուլտետի պատմության մեջ, նրանց դասագրքերը ներկայացված են ՀՀ-ում գրադարանում և թանգարանում, նրանց դասագրքերով սերունդներ են կրթվում:

Մի բան միայն մշեմ, որ բավականին բարդ է ստեղծել մի գիրք, որը բավարարի բոլոր պահանջները և բոլորին, որն իր մեջ զետեղի ամեն-ամեն ինչ, և այդուհանդերձ լինի պարզ, մատչելի, հետաքրքիր ու գրավիչ: Հետևաբար, կարծում են, որ դասագիրքը երեխաների կրթության և դաստիարակության գործընթացի մեկ բաղադրիչն է միայն, ընդամենը մեկ ռեսուրս, և հաջողելու համար նրան «մենակ թողնելը», կարծում են, ճիշտ չէ: Այստեղ պետք է աշխատի մի ամբողջ «գործարան»՝ կրթական փաստաթղթեր, մեթոդական և ուսումնական ձեռնարկներ, ուսումնական նյութեր, էլեկտրոնային աղբյուրներ, հավելվածներ, լրացուցիչ ընթերցանության նյութեր, գրաֆիկներ, թվային գործիքներ, և, ամենակարևորը, ստեղծագործ ու ազատ մտածող ուսուցիչ, մանկավարժ...

Նաև գովելի է, որ դասագրքերի և կրթական այլ ռեսուրսների ստեղծման ուղղությամբ այսօր հեղինակա-

- Նշված բոլոր ձևաչափերն էլ գործում են, ավելացնեն մասնաճյուղի և ֆակուլտետի գործունեության մասին իրազեկելու նպատակով փոխադարձ այցելություններ մանկավարտներ և դպրոցներ, որտեղ արդեն աշխատում են մեր շրջանավարտները, վերապատրաստումներ, մասնագիտական խորհրդատվություն՝ ինչպես առերես, այնպես էլ առցանց:

Շրջանավարտների հետ հետադարձ կապի համատեքստում շատ արդյունավետ են աշխատում on line գործիքները, այս հարցում մեզ շատ են օգնում համալսարանի կայքն ու ֆակուլտետի տեղեկատվական հարթակը, որտեղ դեռևս գրանցված են մնում մեր շատ ու շատ շրջանավարտներ, Facebook-յան էջերը, «Մանկավարժական համալսարան» թերթը: Կապի պահպանման, համագործակցության լավագույն դրսևորում է մասնագիտությունը սերնդեսերունդ փոխանցելը. ավարտելուց հետո, ֆակուլտետում ուսանում են մեր շրջանավարտների երեխաները, բարեկամները, ընկերները...

- **Ինչպե՞ս կզննահատեք համընդհանուր ներառական կրթությունը հանրակրթության ներքին օղակներում...**

- Հարկ է մշել, որ համընդհանուր ներառականությունը, ինչպես նաև բազմազանությամբ խթանումը, վերաբերում է բոլոր սովորողներին: Այն ենթադրում է բոլոր սովորողների կրթական կարիքներին և հնարավորություններին համապատասխան կրթական միջավայրի ձևավորում և խրախուսում:

Ինչ վերաբերում է երեխաներին, որոնք ունեն հաշմանդանություն, երեխաներին, որոնք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեն, ապա այս հարցում չլուծված խնդիրներն ու անելիքները դեռ շատ են, մարտահրավերները՝ ևս: Այստեղ, որպես սեփական փորձառությամբ պայմանավորված կարծիք, ասեմ, որ դրական արդյունքներ և որոշակի աշխատանք նկատվում է հենց կրթության տարրական օղակում՝ տարրական դասարաններում: Իհարկե անելիքները շատ են, ամենաերկար ճանապարհը սկսվում է առաջին քայլից: Եվ հարկավոր է այդ քայլը կատարել:

- **ՀՊՄՀ հոբելյանին ընդառաջ ի՞նչ գործունեություն է ծավալվում ֆակուլտետում:**

- Գործընթացը սկսվել է դեռևս նախորդ տարվանից՝ դպրոցներում ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպմամբ: Գործընթացը շարունակական է, ձեռնարկներն ու նախաձեռնությունները՝ բազմազան. գիտաժողովներ, զեկուցումներ, կլոր սեղաններ, հանդիպումներ մանկավարժների և բուհի շրջանավարտների հետ, գրքերի հրատարակումներ և հողվածներ, ցուցահանդեսներ, համերգներ, մրցույթներ: Նշեմ, որ այս պահին էլ ամբիոններում մշակվում են հետաքրքիր ձևաչափեր, գաղափարներ:

- **Ուրիշ ինչի՞ մասին կուզեիք խոսել:**

- Շարունակելով ՀՊՄՀ 100-ամյակի թեման... Շուրջ 40 տարի է՝ իմ կենսագրությունը կառուցվում է հարազատ մանկավարժական բուհի հետ համաքայլ: Ո՞րն է աշխարհի ամենաթանկ բանը, իհարկե ժամանակը: Իմ ժամանակի մեծ մասն անցել է հարազատ պատերի ներսում: Եվ թվում է՝ իրավունքով կարող եմ ասել՝ Մանկավարժական համալսարանը իմն է: Սակայն կարծում եմ ոչ թե Մանկավարժական համալսարանն է իմը, այլ ես եմ Մանկավարժական համալսարանիմը, մենք ենք Մանկավարժական համալսարանիմը... Եվ դա ամենից առաջ մեծ պատասխանատվություն է և պարտավորվածություն:

Հարցազրույց՝ Սիլվա ԱՍՅԱՆԻ



ԼՐԱՃՈՍ

Մոսկվայի հոգեբանամանկավարժական համալսարանի ներկայացուցիչները Մանկավարժականում

Մանկավարժական համալսարանի ղեկավար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը հուլիսի 8-ին հյուրընկալեց Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի ներկայացուցիչներին՝ ՅՊՄՅ գործընկեր, «Շախմատն ընդհանուր զարգացման համար. ռեֆլեքսիվ-գործնական մոտեցում» ծրագրի ղեկավար և դասախոս, պրոֆեսոր Վիկտոր Զարեցկուն, ՌԴ Առողջապահության նախարարության Մոսկվայի Հոգեբուժության ԳՀ-ի կլինիկական հոգեբանության և հոգեթերապիայի լաբորատորիայի ղեկավար, կոնսուլտատիվ և կլինիկական հոգեբանության ամբիոնի վարիչ, հո-



գեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ալլա Խոլոմոզորովային և հոգեբանական գիտությունների թեկնածու Յուրի Զարեցկուն:

Հավելելնք, որ պրոֆեսոր Վիկտոր Զարեցկին ռուսական «Ինչ, երբ, որտեղ» հայտնի հեռուստախաղի համահիմնադիրներից է. այդ մասին նա հետաքրքիր մանրամասներ ներկայացրեց:

Հանդիպմանը ներկա էին ՅՊՄՅ Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսախյանը և «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գիտական ծրագրի ղեկավար Վահան Սարգսյանը:

Հանդիպումն ընթացավ շախմատի դասավանդման կրթական, հոգեբանական և սոցիոլոգիական խնդիրների շուրջ ակտիվ քննարկումով, շախմատի դասավանդման արդյունավետության համատեքստում կողմերը կարևորեցին սոցիալական հոգեբանության խնդիրների շուրջ գործնական քայլեր կիրառելու անհրաժեշտությունը, ակտիվ երկխոսություն ծավալվեց արտակարգ իրավիճակներում հոգեբանների գործունեության, նրանց պատրաստվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտության և մի շարք այլ խնդիրների շուրջ:

ՅՊՄՅ ղեկավարը բարձր գնահատեց Մոսկվայի հոգեբանամանկավարժական համալսարանի դերը Մանկավարժական համալսարանի գործընկերության համատեքստում՝ վստահեցնելով, որ երկու բուհերի որոշակի ընդհանրությունների շուրջ առաջիկայում ձեռք կբերվեն գործակցության պայմանավորվածություններ՝ ընդհուպ մինչև մինչև դասախոսությունների ներկայացում և փորձի փոխանակում առցանց և առկա ձևաչափով:

Այնուհետև կողմերը ներկայացրին ոլորտում ունեցած իրենց հաջողություններն ու փորձը, փոխանակեցին բուհական պարբերականներն ու հրատարակված այլ ձեռնարկներ:

Որպես փոքրիկ, բայց դալար մի շիվ

Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն



«Որպես փոքրիկ ու դալար մի շիվ անջատվելով Երևանի պետական համալսարանից՝ Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտն անցած վաթսուներորդի ընթացքում դարձավ հաստատուն ու սաղարթախիտ մի կաղնի: Նրա շրջանավարտները ինստիտուտից ստացած անսպառ լույսն ու հոգեպարար ջերմությունն անհուն սիրով ու նվիրվածությամբ տարածում են ամենուր՝ որպես գիտության, մշակույթի, լույսի ու բարության սերմնացաններ» (Ա. Տեր-Գրիգորյան, «Երեկոյան Երևան», 4.09.1982 թ., N 253):

Հայոց լեզվի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի հիմնադիր, դոկտոր, պրոֆեսոր Ա. Ե. Տեր-Գրիգորյանի՝ քառասուն տարի առաջ գրած այս տողերը նույնությամբ կարող են այսօր էլ վերագրվել իր հիմնադրած ամբիոնին, որն այսօր կրում է իր անունը: Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան՝ այսօր արդեն Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը պատկառելի տարիք ունի. ավելի քան հիսուն տարի է, ինչ այն բարի սերմնացանի սնման իր հունդերն է ցանում Հայաստանի և Սփյուռքի զանազան գաղթօջախների դպրոցներում՝ իր վրա վերցնելով հայ մանուկների գրաճանաչության և տարրական կրթության, ինչպես նաև տարրական դպրոցի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման կարևորագույն աշխատանքները, պարտականությունն ու պատասխանավորությունը:

Ամբիոնը ձևավորվել է 1971 թ. սեպտեմբերին՝ Մանկավարժության ֆակուլտետի Մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկաների ամբիոնի բազայի վրա: Այն ի սկզբանե ունեցել է 4-5 դասախոս: Հետագայում՝ դեռևս Ա.Տեր-Գրիգորյանի կողմից ամբիոնի ղեկավարության տարիներին, նրանց թիվը հասավ 15-ի. այստեղ աշխատում էին

գիտության 4 դոկտոր, 8 թեկնածու, դոցենտ, 3 ավագ դասախոս և դասախոս: Այսօր ամբիոնում աշխատում են բանասիրական և մանկավարժական գիտությունների 2 դոկտոր, 10 թեկնածու, դոցենտ և 1 դասախոս:

Ամբիոնի դասախոսական կազմը բազմաթիվ դասընթացներ է վարում ինչպես Սկզբնական կրթության ֆակուլտետի բաժինների բակալավրիատում և մագիստրատուրայում, այնպես էլ Հատուկ կրթության ֆակուլտետում: Ուսումնական աշխատանքներին զուգընթաց՝ ամբիոնը մշտապես եղել և մնում է մայրենի լեզվի տարրական ուսուցման մեթոդիկայի մշակման և կատարելագործման առաջատար. տարիներ շարունակ ամբիոնի դասախոսները գործում և մասնակցություն են ունեցել տարրական դասարանների հայոց լեզվի չափորոշիչների, ծրագրերի ու դասագրքերի, հա-

լու պատասխանատու գործը դարձյալ վստահված է մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյանին, որն իր գիտական ու մանկավարժական հսկայական փորձը ծառայեցնում է ինչպես տարրական դպրոցի ուսուցիչների, այնպես էլ Հայաստանի, Արցախի և Սփյուռքի համար գիտնական մանկավարժների սերունդ պատրաստելուն:

Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսներն այսօր էլ հեղինակ են տարբեր ժամանակաշրջաններում տարրական դպրոցի մայրենի լեզվի բազմաթիվ դասագրքերի, Հայաստանի և Սփյուռքի համար ստեղծված արևելահայերեն ու արևմտահայերեն այբբենարանների, ընթերցարանների, մայրենի դասագրքերի, համակցված դասագրքերի, նախադպրոցականների համար ստեղծված դա-



յոց լեզվի մեթոդիկայի բուհական դասընթացի ծրագրերի ու դասագրքերի կազմության գործընթացներին՝ ոչ միայն մշտապես համընթաց առաջընդվելով գիտության վերջին խոսքով, այլև հաճախ դառնալով տարրական ուսուցման մեթոդիկայում նոր խոսք հնչեցնողը, հիմնարար փոփոխություններ կատարողը, նոր մոտեցումներ ու լուծումներ առաջարկողը: Աշոտ Տեր-Գրիգորյանն է եղել մեզանում հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկայի հիմնադիրը, հիմնադիր մեթոդական իր դպրոցի, որի զարգացմանն անմնացորդ նվիրվեցին իր աշակերտներն ու հետևորդները:

Իր գոյության հիսուն տարիների ընթացքում ամբիոնը ղեկավարել են Աշոտ Տեր-Գրիգորյանը, Նիկիտա Մկրտչյանը, Ջուլիետա Գյուլամիրյանը, Ռուհանդ Ավետիսյանը, Աշոտ Գալստյանը: Այսօր Հայաստանում մայրենիի տարրական ուսուցման խնդիրներով զբաղվող միակ մասնագիտական ամբիոնը ղեկավարե-

նազրքերի համալիրների, տարաբնույթ՝ այսօր նաև մեդիագործիքներով ստեղծված ուսումնաօժանդակ զանազան նյութերի, բառարանների, ուսուցիչների համար նախատեսված մեթոդական ուղեցույցների ու ձեռնարկների: Նրանց գիտակրթական գործունեության արդյունքում ստեղծվել են նաև մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկայի բուհական դասագրքեր, հայոց լեզվի ուսուցման բուհական տեսական ու գործնական ձեռնարկներ, մենագրություններ և այլն, որոնք ընդգրկում են նաև հատուկ մանկավարժությունը, ներառական կրթությունը, մեդիակրթությունը, լեզվաբանությունը, գրականությունը, քրիստոնեական դաստիարակությունը ...

Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում գիտական գործունեությունը ոչ թե զուգահեռ է իրականացվում բուհի ուսումնական գործընթացներին, այլ այդ կրթական գործընթացների զարգացման ու կատարելագործման կարևոր հիմքն է, որն ամբողջությամբ ծառայում է ուսուցիչների նոր սերունդների կրթական գործընթացների բարելավմանը: Ամբիոնը հավատարիմ է մնացել իր այն ուղեծրին, որը գծել էր նրա հիմնադիրը. հայոց լեզվի՝ բուհական մակարդակով ուսումնասիրումը և հայոց լեզվի (մայրենիի) տարրական ուսուցման մեթոդիկան երկու կարևորագույն գիտական հիմնաքարերն են, որոնք պայմանավորել ու պայմանավորում են ամբիոնի գիտակրթական գործունեությունը:

Լիլիթ Տեր-Գրիգորյան
Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ





ԼՐԱՃՈՍ

Հանդիպում ուս գործընկերների հետ

ՌԴ Օմսկի նահանգի կրթության նախարարի տեղակալ Ելենա Կորչագինան, Օմսկի պետական մանկավարժական համալսարանի ղեկավար Իվան Կրոտովը, բուհի միջազգային բաժնի ղեկավար Լյուդմիլա Բեկվալովիչը օգոստոսի 24-ին այցելեցին Մանկավարժական համալսարան: Պատվիրակությանն ընդունեց համալսարանի ղեկավար Սրբուհի Գևորգյանը:

Հանդիպմանը ներկա էին ՀՊՄՀ պրոռեկտորներ Նաիրա Սաֆարյանը և Մարիամ Իսպիրյանը:

Հյուրերը ներկայացրին Օմսկի նահանգի կրթական համակարգը, կրթական հաստատությունները, խոսեցին նրանցում առկա ներուժի, ինչպես նաև մասնագիտությունների մասին: Ելենա Կորչագինան տեղեկացրեց, որ բուհերում սովորող շուրջ 70 հազար ուսանողներից 11 հազարն օտարերկրացի է, այդ թվում՝ 6 հայ: ՀՊՄՀ ղեկավար Սրբուհի Գևորգյանը ներկայացրեց 100-ամյա համալսարանի գործունեությունն ու ներուժը, անդրադարձավ կառուցվածքային առանձնահատկություններին, ապա խոսեց առաջիկա համագործակցության մասին՝ մատնանշելով մանկավարժական բուհի առաջնահերթությունները: Բուհի ղեկավարը հատկապես ընդգծեց համատեղ մագիստրի իրականացմանն ուղղված աշխատանքը, որը կներառի տարբեր մասնագիտությունների ուղղությամբ կուրսակառուցի փոխանակումը՝ ուղենշելով գործակցությանն ուղղված քայլերը:

Ռարտադիր գիմնորակական ծառայությունն անցել էր 2012-2014 թվականներին, աշխատում էր ՀՀ ջրային կոմիտեում, սակայն Հայրենիքի համար օրհասական պահին նա որոշում կայացրեց հայրենիք իր կարիքն ունի, պետք է գիմնորակվել, մասնավորապես 2016 թվականի պատերազմի փորձը: Եվ ահա գրիչը փոխանցեց զենքով:



Պարտադիր գիմնորակական ծառայությունն անցել էր 2012-2014 թվականներին, աշխատում էր ՀՀ ջրային կոմիտեում, սակայն Հայրենիքի համար օրհասական պահին նա որոշում կայացրեց հայրենիք իր կարիքն ունի, պետք է գիմնորակվել, մասնավորապես 2016 թվականի պատերազմի փորձը: Եվ ահա գրիչը փոխանցեց զենքով:

Հուլիսի 7-ին Վաչագանը դարձավ 31 տարեկան: Ծննդյան օրվան նվիրված միջոցառումը, որին մասնակցում էին հարազատներն ու ընկերները, հարգանքի տուրք էր երիտասարդի հիշատակին, եռաբլուրը՝ սուրբ նահատակի նկարի առջև խոնարհումի անխոս ծես:

Վաղարշապատի №2 դպրոցի բակում, ուր սովորել է, մեկ տարի առաջ նրա հիշատակին տեղադրված խաչքարի մոտ անցկացված ցերեկույթը հայրենասիրության յուրօրինակ դաս էր: Աշակերտների շուրթերից

Ընտրվեց արհկոմի նոր նախագահ

Հուլիսի 6-ին Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ բուհի արհեստակցական կազմակերպության արտահերթ 5-րդ համաժողովը:

Համաժողովի նախագահության կազմում ընտրվեցին Հայաստանի բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Արմեն Ավետիսյանը և ՀՊՄՀ Արհկոմի լիազորված ներկայացուցիչ Սվետլանա Մարուբյանը:



Օրակարգում լսեցին ՀՊՄՀ արհկոմիտեի 2017-2022 թվականներին կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը, որը ներկայացրեց Սվետլանա Մարուբյանը:

Լսեցին վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը, որը ներկայացրեց վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ Կարեն Խանյանը:

Հաշվետվությունները գնահատեցին «բավարար»:

Օրակարգում նաև ընտրություններ էին: Ներկայացրեց քվեարկությամբ համալսարանի արհեստակցական կազմակերպության նոր նախագահ ընտրեցին Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի դեկանի օգնական, միակ առաջադրված թեկնածու Էդիկ Գուլյանին:



«Լավագույն արդերը չհեռացան»

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի կառավարման բաժնի 2012 թվականի բակալավրիատի շրջանավարտ Վաչագան Խաչիկի Մանուկյանը և՛ 2016 թվականի ապրիլին, և՛ 2020 թվականի պատերազմին կամավորագրել է, ընկերների հետ շտապել պաշտպանելու հայրենիքը:

Պարտադիր գիմնորակական ծառայությունն անցել էր 2012-2014 թվականներին, աշխատում էր ՀՀ ջրային կոմիտեում, սակայն Հայրենիքի համար օրհասական պահին նա որոշում կայացրեց հայրենիք իր կարիքն ունի, պետք է գիմնորակվել, մասնավորապես 2016 թվականի պատերազմի փորձը: Եվ ահա գրիչը փոխանցեց զենքով:

Հուլիսի 7-ին Վաչագանը դարձավ 31 տարեկան: Ծննդյան օրվան նվիրված միջոցառումը, որին մասնակցում էին հարազատներն ու ընկերները, հարգանքի տուրք էր երիտասարդի հիշատակին, եռաբլուրը՝ սուրբ նահատակի նկարի առջև խոնարհումի անխոս ծես:

Վաղարշապատի №2 դպրոցի բակում, ուր սովորել է, մեկ տարի առաջ նրա հիշատակին տեղադրված խաչքարի մոտ անցկացված ցերեկույթը հայրենասիրության յուրօրինակ դաս էր: Աշակերտների շուրթերից

հնչում էին Վաչագան Մանուկյանի գրքից տողեր. «Ներքի ինձ, Հայրենիք... Ներքի, որ չկարողացա կերտել հաղթական երթը, ու ներքի, որ բոլոր վերքերդ չկարողացա առնել մարմնիս վրա՝ որպես բազմաչարչար օրերիդ մխիթարանք... Ներքեց ինձ, այսօրվա հրաշք մանուկներ, ներքեց, որ արյունս բավարար չեղավ փրկել ձեր կյանքերն ու վաղվա սերունդներին: Եվ ներքի ինձ, իմ ազգ, անվնաս երկիր քեզ չնվիրելու համար»:

Խաչքարի մոտ խնկորհնություն և ծաղիկների խոնարհման արարողություն տեղի ունեցավ: Այնուհետև Վաղարշապատի մարզական կառույցում անցկացվեց հերոսի հիշատակին նվիրված դասական ոճի ըմբշամարտի առաջնություն և զավթների խաղարկություն:

«Վաչագան Մանուկյանը Մանկավարժական համալսարանի շրջանավարտ է, նրան հիշում են համալսարանում, նրանով հպարտանում են: Եվ այս միջավայրն ու միջոցառման մասնակիցների ներկայությունը հուշում է՝ ինչ պայմաններում է ձևավորվել ապագա հերոսը և ինչու է հենց ինքն առաջններից մեկը մեկնել Հայրենիքը պաշտպանելու: Համալսարանի ղեկավարությունը, ինչպես Արցախյան երեք պատերազմներում զոհ

ված 60 դասախոսներին և ուսանողներին, Վաչագանին և պարզևատրել է «Մանկավարժական համալսարան» մեդալով», - ասաց համալսարանի գիտական գործարանի տնօրեն, Արցախի առաջին պատերազմի մասնակից, պահեստի փոխգնդապետ Տիգրան Պետրոսյանը և մեղալը հանձնեց հերոսի հորը, բանաստեղծ Խաչիկ Մանուկյանին, վերաշարադրելով բանաստեղծի հայտնի տողերը.

Լավագույն տղերքը չհեռացան, Նրանք առյուծաբար կռվեցին Արցախի համար, Հերոսաբար ընկան...

Նրանց հոգիները երկինք բարձրացան, Որ երկնքից հսկեն Հայաստանի ապագան...

Հուլիսի 7-ին Գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Վահագն Սարգսյանի, հասարակական-քաղաքական գործիչ Պարույր Հայրիկյանի, Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի, «Արմավ» հրատարակչության տնօրեն Արմեն Ավանեսյանի, ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ, գեներալ մայոր Վարդան Ավետիսյանի ելույթները՝ լցված հերոսի հիշատակի հանդեպ խորին ակնածանքով ու խոնարհումով, հայրենասիրության մեթոդային պատգամներով:

Երեխաներին սովորեցնել՝ ապրել գեղեցիկով

Ֆիզմաթ գիտությունների թեկնածու, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հանլետ Միքայելյանը Մանկավարժական համալսարան էր հրավիրել տարբեր տարիների իր ուսանողներին, որոնց մի մասն աշխատում են որպես մաթեմատիկայի ուսուցիչներ: «Գեղեցիկը և մաթեմատիկան» թեմայի շուրջ նրա դասախոսությունը համակ ուշադրությամբ էին լսում շրջանավարտները, նաև դասիլիճից ակտիվորեն արծազանքում էին:



Պրոֆեսորի ներկայացրած թեմայի առանցքում երեք հասկացություններ էին: Առաջինը «կարոտն» էր, մի զգացողություն, որը շատերը չեն կարողանում հաղթահարել: «Տարբեր տարիքներում «կարոտի» զգացումը տարբեր է լինում: Երբ մեծանում ես, կորցնում հարազատներից շատերին, մի տեսակ այլ կարոտ ես ապրում՝ կարոտ ամեն ինչի նկատմամբ՝ ջերմ հիշողություններով լեցուն», - ասում է պրոֆեսորը:

Կան գիտությունների թագուհի» ընդունված ձևակերպմանը և թե ինչու է այն թագուհի համարվում, չէ՞ որ բոլոր գիտությունների մեջ կա գեղեցիկը... Որովհետև մաթեմատիկան ոչ միայն գիտություն է, այլև լեզու և մյուս գիտությունների դռները բացող բանալին:

Մարդն է բնությանն իմաստ հաղորդում, իմաստավորում այն իրենով, իր գոյությամբ՝ վստահեցնում է Հ. Միքայելյանը՝ շարունակելով «գեղեցիկը» ներկայացնել բնության, գիտությունների, տարբեր զգացողությունների հետ հարաբերություններում:

Մաթեմատիկական գեղեցիկի հատկանիշների մասին խոսելիս նա անդրադառնում է մաթեմատիկային՝ որպես գեղեցիկի չափանիշի, ինչպես նաև անդրադառնում մաթեմատիկային՝ արվեստում, մաթեմատիկային՝ որպես գեղեցիկի կազմավորման միջոցի:

«Գեղեցիկը կարոտ է առաջացնում», - ասում է Հ. Միքայելյանը՝ ասածը փաստելով կյանքից վերցրած օրինակներով, ապա հավելում՝ գեղեցիկը ընդհանրական հատկանիշ է, հատուկ է ամեն ինչին:

Մաթեմատիկական մտքերը ճշգրիտ են և անպայման ճշմարիտ՝ ասում է պրոֆեսորը և բարձրաձայնում կարևոր մի փաստ՝ ինչ հույները մարդկությանը տվել են մի «զենք»՝ ապացուցումը: Հ. Միքայելյանը մաթեմատիկական փիլիսոփայական մտածողության սահմաններում երկրաչափական տերմիններով ու երկրաչափական օրինակներով ներկայացնում է նրանց ներքին և արտաքին գեղագիտությունը՝ գեղեցիկի կապը շրջանագծի և եռանկյունու, շրջանագծի և քառանկյան հետ, բերում բազմաթիվ օրինակներ:

Նա իր շրջանավարտներին հիշեցնում է, որ հույն փիլիսոփաներից սկսած՝ բոլոր իմաստունները փորձել են գեղեցիկի սահմանումները ձևակերպել, բայց չի ստացվել, որովհետև մեկի համար գեղեցիկը օգտակարն է, մյուսի համար՝ այն, ինչ ուրախություն է պատճառում... Պրոֆեսորն անդրադառնում է գեղեցիկին գիտության, մասնավորապես՝ մաթեմատիկայի մեջ:

Ո՞րն է Հանլետ Միքայելյանի ելակետը մաթեմատիկայի մեջ գեղեցիկը ներկայացնելու անվերջ փնտրության մեջ. այն, որ գեղեցիկն ամենուր է, ամենատարբեր զգացողությունների մեջ, որ մաթեմատիկան չոր գիտություն չէ, ինչպես ընդունված է ասել, այլ գեղեցիկ գիտություն և ուսուցիչներին հորդորում է՝ երեխաներին պետք է սովորեցնել՝ ապրել գեղեցիկով:



ՆԱԽԱԴԱՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ ԱՄԲՈՆ



Նախադպրոցական մանկավարժներն ունեն կարևորագույն առաքելություն՝ մշակելու և խնամելու մատաղ սերունդի ծիլերը:

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնը հետամուտ է նախադպրոցական կրթության որակի բարելավման և այդ ուղղությամբ նորարարական մոտեցումների մշակման ու ներդրման գործընթացներին: Այս առումով գնահատելի են ամբիոնի դասախոսների կողմից ուսումնամեթոդական ձեռնարկների, ծրագրերի հրատարակումները, խաղային նորագույն տեխնոլոգիաների, Ն. Ա. Ջայցկի «Խորանարդիկներ» տառաձանաչությանը միտված մեթոդիկայի տեղայնացումը, մաթեմատիկական տարրական պատկերացումների ձևավորման, էկոլոգիական կրթության իրականացման նոր մոտեցումների, խոսքի զարգացմանը միտված ՄԽՏ տեխնոլոգիայի մշակումը և ձեռք բերված արդյունքները գիտական տարբեր միջազգային ամսագրերում ներկայացնելը:

Նախադպրոցական կրթության ոլորտին առնչվող մասնագիտական հարցերով ամբիոնն ակտիվորեն համագործակցում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ:

2020 թվականի օգոստոսի 10-ից 19-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի և Խ.Աբովյանի անվան ՀՀԿՄՍ նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոսների կողմից նախակրթարանի դաստիարակների համար կազմակերպվել է առջնաց վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են 22 մանկավարժներ Հայաստանի տարբեր մարզերից:

2020-21 թթ. նախադպրոցական կրթության պետական չափորոշիչների վերանայման նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ստեղծված աշխատանքային խմբում ընդգրկվել են ամբիոնի դասախոսներ Ալլա Դալլաթյանը, Յեղիմե Խաչատրյանը, Մարիաննա Ամիրադյանը և Արևիկ Խուզեյանը:

Ամբիոնի դասախոսներ Սվետլանա Մարությանը, Իրինա Պոնոմարենկոն, Աննա Սիմոնյանը 2021 թվականից ներգրավված են ՀՀ նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերի ստեղծման աշխատանքային խմբում:

Յուրօրինակ ձեռքբերում էր շախմատի ներմուծումը նախադպրոցական կրթության ոլորտ, որն ամբիոնի և ՖԻԴԵ-ի համագործակցության արդյունք էր: Այդ



համատեքստում 2021 թվականի հունիս-հուլիս ամիսներին ամբիոնի ողջ անձնակազմն իրականացրեց Հայաստանի երեք մանկապարտեզների դաստիարակների վերապատրաստման դասընթաց՝ «Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում» խորագրով: Համագործակցության արդյունքները ներկայացվեցին ՀՀԿՄՍ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի և ՖԻԴԵ-ի համատեղ կազմակերպված միջազգային գիտաժողովում:

Մեծ է ամբիոնի ներդրումը Innostud.am կրթական հարթակի ստեղծման, դրանում նախադպրոցականի համակողմանի զարգացմանը նպաստող բազմաբովանդակ, այդ թվում և շախմատային բովանդակությամբ խաղ-առաջադրանքների մշակման, թվայնացման գործում:

Ամբիոնի պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Վլադիմիր Կարապետյանի ջանքերով համալսարանի «Գիտական տեղեկագիր» պարբերականն ընդգրկվեց eLIBRARY.ru էլեկտրոնային գրադարանի ամսագրերի ցանկում:

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնը սերտորեն համագործակցում է մի շարք բուհերի համապատասխան ամբիոնների հետ, մասնավորապես՝ Գ. Ս. Սկովորոդի անվան Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի, Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան ռուսական պետական մանկավարժական և Բելառուսի Մ. Տանկի անվան պետական մանկավարժական համալսարանների հետ:

Ամբիոնի դասախոսները մասնակցում են մասնագիտական վերապատրաստման դասընթացներին, նաև



կազմակերպում են վերապատրաստումներ՝ ուղղված նախադպրոցական ոլորտի մանկավարժների մասնագիտական որակների բարելավմանը:

2022 թվականին ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմենուհի Մանուկյանը, ով 10 մասնագիտական գրքի և 137 գիտական հոդվածի հեղինակ է, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորության փիլիսոփայական գիտությունների դոկտոր, գործնական հոգեբան:

Ամբիոնի ձեռքբերումներից է նաև ամբիոնի դասախոս Արևիկ Խուզեյանի հիմնադրած «Արև օր» զարգացման կենտրոնը, որն իր հարկի տակ է միավորել 1.5-5 տարեկան երեխաների:

2022 թվականին, բուհի 100-ամյակին ընդառաջ, ամբիոնը լի է վճռականությամբ՝ լուծելու նախադպրոցական կրթության արդի խնդիրները, ընդլայնելու միջազգային համագործակցությունը, մշակելու և ներդրելու նախադպրոցական կրթության նոր մասնագիտություններ՝ համահունչ ժամանակակից պահանջներին:

Դպրոցից դպրոց



Որքան հետաքրքիր է ժամանակի միտքը. մի օր հանկարծ հետ են նայում ու զարմանալիորեն նկատում, որ կյանքից շատ տարիներ են անցել: Դու ապրել ես քեզ համար՝ վազելով նպատակներիդ ու երազանքներիդ հետևից: Երբ դրանց որոշ մասն իրականացել է, դու չես էլ կարևորել: Երբեմն հեշտ, երբեմն դժվար, ինչ-որ պահի՝ հուսահատված, ամեն ինչ թողնելու տրամադրվածությամբ, հաջորդ պահին՝ կրկին վճռական՝

ամեն բան հաղթահարելու, պայքարելու ոգով տրամադրված: Ու այդպես անցել են տարիներ: Ինչ պարագայում այդ տարիների ընթացքում գծվել է դպրոցից դեպի դպրոց մի անչափ հաճելի ուղի:

Տարիներ առաջ՝ դեռևս դպրոցում որպես աշակերտ, երբեք ինձ չէի պատկերացնում ուսուցչի դերում: Ավագ դպրոցում ծնվեց ուսուցչի դառնալու իմ որոշումը, թեև դպրոցական տարիներին ինձ միշտ գրավել է ուսուցչի մասնագիտու-

յունը: Ես ընդունվեցի Մանկավարժական համալսարան, և այն ինձ օգնեց ուսուցչի դառնալու հարցում:

Մանկավարժական համալսարանն իր մեկդարյա պատմության ընթացքում շատ մանկավարժներ է պատրաստել, և հիմա ես էլ եմ դարձել այդ մանկավարժներից մեկը ու դեռ շարունակում եմ գիտելիքներս հարստացնել հարազատ դարձած բուհում՝ արդեն մագիստրոսի կարգավիճակով: Մագիստրատուրայում

ուսումնա շարունակելն ինձ հնարավորություն է տալիս ավելի հմտանալ իմ մասնագիտական որակների մեջ, ձեռք բերել նոր կարողունակություններ, սովորել փորձառու դասախոսներից, ստանալ նրանց կողմից մեզ փոխանցվող ուսուցչի համար անհրաժեշտ անձնային և մասնագիտական որակները: Ինձ հաջողվեց նաև կրկին վերադառնալ դպրոցական առօրյային, ճիշտ է՝ այլ դերով. կրկին հայտնվելով դպրոցական եռուզեռի մեջ, աշխատելով երեխաների հետ՝ նորից մանկացա... Երբեմն անհավատալի է թվում, բայց ես անցել եմ դպրոցից դպրոց հրաշալի մի ուղի և հիմա կրկին այնտեղ եմ, որտեղից կարծես սկսվեց այս ամենը:

Ինձ համար մեծ հաճույք էր Սկզբնական կրթության ֆակուլտետում սովորելը. տարրական դպրոցի ուսուցչի նկարագրի ու որակների ձեռքբերման ճանապարհը ես անցա այնպես՝ սահուն, այնքան հաճույքով, որ ուսուցչի նկատմամբ սերը վերածվեց ուսուցչի դառնալու ամառարկելի ձգտման: ...Ու հիմա ուսուցիչ եմ, աշխատում եմ սիրով, սովորում եմ մագիստրատուրայում հաճույքով:

Շնորհակալ եմ իմ բուհին, իմ ֆակուլտետին, իմ բոլոր դասախոսներին և կուրսընկերներին՝ ինձ տված նման բարձրագույն բերկրանքի համար:

Լալա ՍՏՓՈՆՅԱՆ
Մագիստրոս, Երևանի № 104
հիմնական դպրոցի դասվար



Եվ թող բարի լինի հետագա ուղին

Մանկավարժական համալսարան (այն ժամանակ՝ ինստիտուտ) ընդունվեցի 17 տարեկանում, երբ դեռ նոր ավարտել էի դպրոցը, և շատ թարմ էին ոգևորող և անընդհատ սովորելու ձգտում առաջացնող ուսուցիչներից ստացած տպավորությունները, որոնք ինձ համար ձևավորել էին կարծիք ուսուցչի կերպարի և գործառնությունների մասին: Այդ ոգևորությամբ և մոտ ապագայում ուսուցչի դեր ստանձնելու մեծ սպասումով անցան մաև ուսանողական չորս տարիները Սկզբնական կրթության և մանկավարժության ֆակուլտետում: Այդ տարիները երազանքս պարուրում էին խանդավառությամբ և նոր մոտեցումներ կիրառելու, ստեղծարար լինելու հնարավորություններ էին ուրվագծում... Չորս տարիներ, որոնք կրթվելու, միաժամանակ յուրովի արտահայտվելու, ինքնադրսևորվելու համար շատ կարևոր հիմնասյուներ դարձան ինձ համար: Յուրաքանչյուր դասախոս, յուրաքանչյուր համակուրսեցի իր փոխանցած գիտելիքներով, խորհուրդներով, խոսքերով ու ժպիտներով, համատեղ կատարած աշխատանքի պտուղները քաղելու վայելքներով կարևոր դեր ունեցան և քայլ առ քայլ նպաստեցին իմ այսօրվա մանկավարժի կայացմանը...

Բայց միշտ էլ հանդիպում եմ մարդիկ, ում հետ հաղորդակցումն ու համագործակցությունը դառնում են որոշիչ... Մանկավարժական կրթություն ստանալու ճանապարհին շատ սիրելի դասախոսներ եմ ունեցել՝ Վարդգես Մարգարյան, Վալենտինա Կաժյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան, Քնարիկ Ղուկասյան, Ռուբեն Պողոսյան, Անահիտ Բաղդասարյան, Անահիտ Ղազարյան և շատ-շատերը, իսկ կուրսղեկս՝ Ջուլիետա Գյուլամիրյանը, ինձ համար դարձավ թե՛ մասնագիտության, թե՛ կյանքի խորհրդատու, մարդ, ով սովորեցրեց մաև կարևորել և վառ պահել կյանքի գույները, սովորեցրեց, որ ուսումնառության գործընթացը միշտ էլ երկկողմանի է, և ամեն փուլում կարելի է կրթվել, զարգանալ և այնուհետ գործընթացին միանալ բարեփոխումներով, միշտ լինել առկա մարտահրավերները լուծելու պատրաստ և նպաստող... Սովորեցրեց սիրել մարդուն, սիրել փոքրիկ մարդ աշակերտին:

Մանկավարժական համալսարանն ավարտելուց (2001 թ.) մինչ այժմ ես աշխատում եմ իմ մասնագիտությամբ՝ «Շիրակացու Ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրում, որպես հայցորդ՝ շարունակել եմ ուսումնառությունն հարազատ բուհի Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: Փորձում եմ ինքնարտահայտվել մանկագրության ասպարեզում, ստեղծում եմ կրտսեր դպրոցականների զարգացմանը և ուսուցման արդյունավետությանը նպաստող ուսումնառական միջոցներ, շարունակ պրակտիկում և փորձում եմ նոր բացահայտումներ կատարել իմ մասնագիտության շրջանակներում... Եվ այդ ամենի հիմքում մաև իմ սիրելի համալսարանի ներդրումն է...

Մանկավարժական համալսարանի 100-ամյակի կապակցությամբ շնորհավորում եմ բոլորին, քանզի բոլորն ունեն, ունեցել են կամ կունենան ուսուցիչներ... Վստահ եմ, որ իմ համալսարանը միշտ կլինի առկա մարտահրավերների յուրովի լուծում սովորող, մշտապես թարմ շունչ ապահովող մեծ բարեփոխումների կենտրոն... և թող բարի լինի հետագա ուղին...

Աննա ԱՍԼՆՅԱՆ
ՀՊՄՀ շրջանավարտ



Իմ հաջողության բանաձևը

Ուսանողական կյանքը լի է վառ, գունեղ հիշողություններով: Այս տարիներն ամենահետաքրքիրն էին ու ամենաանմոռանալիքն: Դրանք միշտ ասոցացվում են երիտասարդության, զվարճանքի, ուրախության հետ: Ուսանողական տարիներին դու ամենակարող խենթ ես, և աշխարհը գունեղ է ու հրաշքերով լի, աշխարհը հեքիաթ է՝ լուսավոր ու զարմանահրաշ:

Ուսանողական տարիներն ինձ տվեցին ներքին մեծ ուժ՝ հավատալու, տոկալու և պայքարելու անորդվելի ցանկություն: Իմ կյանքում ամենահետաքրքիր ժամանակաշրջանը ուսանողական տարիներն են: Տարիներ, երբ ձեռք ես բերում ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, այլև՝ նոր ընկերներ, իսկ նոր ընկերները դառնում են գաղափարակիցներ:

Համալսարանում սկսվեց իմ ձեռքբերումների շղթան՝ անմոռանալի հիշողություններ Աղավնածու-

րում անցկացրած ծնեռային հեքիաթից, գիտական հոդվածներ, հաջողություններ արվեստի ոլորտում, թարգմանված, վերամշակված մուլտֆիլմեր, հեքիաթներ, հանելուկներ, «Հաջողության բանաձև», ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից շնորհված «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի մրցանակ և շատ ու շատ այլ ձեռքբերումներ: Խորհուրդս հեքիաթում հայտնված բոլոր ուսանողներին՝ «Ճանապարհը դժվար է, բայց լի հրաշքերով ու հաջողություններով, ուստի՝ երբեք չհամձնվեք, քայլեք առաջ ու եղեք լավատես»:

Ուսումնառությունն համընկավ մեկդարյա պատմություն ունեցող Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 100-ամյակին, որին նվիրվել են բազմաթիվ միջոցառումներ, ցուցահանդեսներ, ինչպես մաև «Իմ համալսարանը 100 տարեկան է» խորագրով քարոզ-մրցույթ:

«Ուսանող»... այս բառն այնքան հոգեհարազատ է ինձ, որ, թվում է, ինչ բարձունքի էլ հասնեմ, միշտ մնալու եմ ուսանողի կարգավիճակում:

Ամեն ինչ հիշվելու է, բայց երբեք ջանքեր պետք չեն լինի գործադրել՝ հիշելու այն սերը, ջերմությունը, հոգատարությունը, որը ստացել եմ իմ դասախոսներից: Եվ այդ սերն ու ջերմությունն ինձ ուժ տվեցին առաջ գնալու՝ վստահ ու համարձակ: Այս տարիներին դու քեզ ուժեղ ու զորավոր ես զգում, քանի որ թիկունքում զգում ես այն մարդկանց ուժը, ովքեր քեզ տալիս են «ինչուների» պատասխանները, քեզ կերտում են որպես անհատականություն, օգնում են գտնել քո սեփական ետը:

Ուսանողական կյանքն իր մեջ բովանդակում է ուրախություն, ակտիվություն, դժվարություններ, ընկերներ, սեր, խաղ, ժպիտ, տոներ, հուշեր... և այս շղթան կարելի է անվերջ շարունակել: Ուսանողական կյանքը մնան է մի փոքրիկ հեքիաթի, որը լուսավորում է մեր ուղին:

Ուսանողական տարիներն անցնում են ակնթարթի պես, սակայն ուսումնառությունը չի ավարտվում: Ամբողջ կյանքի ընթացքում պետք է կարևորել ուսումնառության գործընթացը, որտեղ զուգորդվում են մարդկային գործունեության անհատական և բարոյական կողմերը՝ ձևավորելով մարդուն իր ընտրած մասնագիտության մեջ:

Ջուլիետա ԱՍՆՈՒՎՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի շրջանավարտ

Անասիման երախտագիտությանը

2007 թ.-ի սեպտեմբերի 1, երևան: Կյանքիս ամենաերջանիկ օրերից մեկը. գնում եմ Երևան՝ երազներիս համալսարան: Սիրտս լի է բերկրանքով, տարօրինակ զգացողություն է պատել հոգուս: Կարծես փոքրիկ աղջնակը միանգամից մեծացել էր ու դարձել հասուն մի ուսանող: Առաջին անգամ ոտք եմ դնում սիրելի ուսուցիչներիս ինստիտուտի շենքը (այժմ՝ համալսարան): Շունչս պահած՝ սպասում եմ, թե երբ պետք է բարձրածայն կարդան իմ ազգանուն, անունը՝ Ավագյան Ամալյա: Վերջապես՝ կարդացին: Երբեք անունս այսքան ախորժալուր չէր հնչել ականջներս: Ապա զնազինք մի մեծ լսարան, որտեղ ծանոթացանք մեր դասախոսների հետ, այն դասախոսների, որոնք անջնջելի հետք էին թողնելու յուրաքանչյուրիս կյանքում: Բոլորն էլ լավն էին, յուրահատուկ, բարձր արժեքների ու որակների տեր: Սակայն նրանցից ոմանք ոչ միայն գեղեցիկ հուշեր ու գիտելիքներ թողեցին ինձ նվեր, այլ մաև շարունակում են նեցուկ լինել իմ, երբ արդեն ինը տարի է, ինչ չեմ հաճախում այդքան հարազատ, միշտ ջերմ ու անփոխարինելի համալսարան:

Ամեն անգամ այդ օրերը հիշելով՝ սիրտս թրթռում է, ցնծում, լցվում անասիման սիրով, դրական էներգիայով: Վերջերս, երբ մտա համալսարան, ինձ մոտ այնպիսի տպավորություն էր, թե ամուսնանալուց հետո առաջին հայրական տուն եմ եկել, ու տաքուկ, կաթոգին, գորովալից զգացողությունները ստիպեցին ինձ չտեսնել այս ու այն կողմ վազող ուսանողներին, ստիպեցին ակամայից ժպտալ, ուրախանալ, շնչել կարոտած օդը, հիշել ընկ. Հովհաննիսյանի խորհուրդները, ընկ. Ավանեսյանի ջանքերը, որ տվյալ դասից գոնե ինչ-որ բան թողնի ուսանողներիս մեջ, ընկ. Տեր-Գրիգորյանի բարի ժպիտը, միշտ օգնելու պատրաստակամությունը, ընկ. Գյուլամիրյանի՝ երբեք չբարկացող, բարյացակամ ու միշտ երիտասարդ դեմքը, որն անվերջ հուշում էր՝ դու կարող ես, դու չպիտի՝ հանձնվես ոչ միայն մասնագիտությանդ մեջ, այլև կյանքիդ մեծ օվկիանում:

Շնորհակալ եմ, ի՞նչ անգին, պանծալի՛, սրտացավ, բարեխիղճ, անմնացորդ նվիրված, միմիայն շռայլ գովեստի արժանի դասախոսներ: Թո՛ղ Ձեր բոլոր ուսանողները զնահատեն այն ահռելի աշխատանքը, որ Դուք կատարում եք ամեն օր՝ նրանց ճիշտ ճանապարհով քայլել սովորեցնելու համար: Իսկ ես մինչև կյանքիս մայրամուտը հիշելու եմ և անասիման երախտագիտությունն հայտնելու բոլորիդ:

Ամալյա ԱՎԱԳՅԱՆ
Շրջանավարտ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ. Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97: Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը: Հասցեն՝ Արշակունյաց 2 Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար: Հանձնված է տպագրության 31.08.2022 թ. Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՄՐՅԱՆ Բանասիրական գիտությունների թեկնածու Էջաղուրմը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՄՐՅԱՆ